ԹՎԻՆ ՌՃԺԶ: (1667). ՅԻՇԱՏԱԿ Է ԹԱՆԱՊԱՏԻՍ ԱՅՍ Է ՈՐ ԵՍ ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՈՐԴԻ, ՈՐ Է ԻՄ ԱՆՈՒՆ ՄԵԼԻՔ ԵԿԱՆ, ՈՐ ԱՌԱՋ ԵՒ ԽԵԼԽՆ ՋԱՄ] ԴԵՌ ԻՆՁ ԿԱՐՔԵՑԻՆ ՔՕԽՎԱՅՑ, ՅԻԴ ՆՈՐԱՑ ՈՐ ՕՂՔԱՆԻՆ . . . . ԴԵՌ ԱՒԳԱԼ ՍՈՂԹԱՆ ՀՈՒՍԷՅԻՆԻՑ ՏԳԱՑ ԳԱՀԹՄԻԳ ԷՐԵՔՆ ՈՐ Ի ՑԻՆՁԱՓ ԳՈՒԼ ՈԳԱՐԿԷ. ՈՐ ՊԻՐԱՒ ԻՆՁ ՏՈՒՆ . . . . ՄԷԼԻՔՈՒԹՈՒՆ ԴՎԱՎ: ԱՅԼ ՕՍՄԱՆԼՈՒՆ ԵԿԱՎ ԱՌԱՎ Ի ՁԵՌ ՆՈՐԱՑՆԻՑՆ. ՈՐ ԱՆ ԷԼ ԱՍՁԱՓ ԳՈՒԼ ՈՒԳԱՐԿԷ ՈՐ ՊԻՐԵՆ ԴԻՋԱԿ. ԻՆՁ Դ . . ՎԱՎ ՍՕՎԼԳԱՐ ԱԳԷ: ՇԱՀ ՆԱՑԴԻՐ ՋՕՐԷԳ ԹԱՔԱՈՐ ՆԿԱՒ ՋՕՐՕՔ, ԱՌԱՒ ՕՂՔԱՍ Ի ՁԵՌԷՍ ՕՍՄԱՆԼՈՒԷՆ ԱՆԱՑ, ՆՈՐԱՑ ԷՍՁԱՓ ԳՈՒԼ ՈԳԱՐԿԷ ՈՐ ԴՐԱՒ ԻՆՁ. ԱՅՍ ԵՐ ՋՄՈՀԻԼԻՍ. ԱՋԿ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ԴԵՑ ՈՐ ՄԷԿՆ ԹԱԼԻՇ, ՄԷԿՆ ՁԱՐԱՅՑՊԵՐԹ, ՄԷԿՆ ԽԱՉԱՆ, ՄԷԿՆ ՎԱՐԱՆԴԱՑ, ՄԷԿՆ ՔՈՉԵՋ, ՄԷԿՆ ՏՈՒՋԱԳ. ԱՅՍԴՈՒՆՑ ԽԱՆԸ ՊԱԿԼԱՐՊԷԿԱՑ ՏԵԳ ԱՐ ԻՆՁ ՇԱՓԼՑԳԱԹ ԱՐԱՒ: ՕՎ ՈՐ ՑԵԴՕՎ ԿԱՐԹԷ, ԱՅՍ ԴԻՐԵՍ ԻՄԱՆԱՑ ՈՐ ՄԵՐ ՈՐՊԷՍՈՒԹՅՈՒՆ ԱՅՍՊԷՍ ԻԼԱՒ. ՄԻՆ ՈԳՈՐՄԵԱ. ԱՅՍ Է ԵԳԵՒ ԱՄԷՆ:

ԵՍ ԹՈՂԵՑԻ ՈՉ ՀԱՅԱՍԴԱՆԱՍ ԵՍԻՐ ԳԱԼՈՒ:

Ծանոթ. *Թվականի այս ընդհանրացած վերծանումը չի համապատասխանում պատմական փաստերին, այսպես՝ Մելիք Եգանը (բուն անունը Ալան) Լոռիից փոխադրված և Տող գյուղում հաստատված է համարվում 1716 թ. և մահացել է 1744 թվականին։*

*Նկատի պետք ունենալ հետևյալ հանգամանքը. արձանագիր գրիչները հաճախ Ժ և Ծ տառերը գրում են իրար շատ նման ձևով, որը և շփոթության տեղիք է տալիս։ Թվում է, որ ներկա դեպքում թվականի մեջ տասնավոր Ժ-ն պետք է Ծ վերծանել, որով կստացվի 1707 թվականը։ Այս դեպքում նաև Մելիք Եգանի Տող տեղափոխվելու ժամանակը մոտ 10 տարով կհնանա։*

*Հրատ. Բարխուդարեանց, 76—77։*

## 64. ԳՏՉԱ ԲԵՐԴ ԵՎ ԳՏՉԱ ՎԱՆՔ

*Հուշարձանների այս խումբը գտնվում է հնագույն Մյուս Հաբանդ, հետագայում Դիզակ գավառի և այժմյան Հադրութի շրջանի Տող, Տումի և Թաղլար գյուղերի արանքում առանձնակի բարձրացող բարձր սարի գագաթին։ Լեռան և վանքի անունները գրվել են զանազան ձևերով, հնում՝ Քթիշ, հետագայում՝ Կտիչ, Գտիչ, իսկ նոր ժամանակներում՝ մելիքանիստ Տող գյուղի անունով՝ Տողի բերդ։*

*Ամբողջովին անտառապատ լեռան գագաթին մնում են բերդի պարիսպների ավերակները, դիմացը փորված խոր խրամը և ներսում մեծ թվով տնատեղեր։*

*Քթիշ բերդը Արցախի հնագույն և ամրագույն բերդերից մեկն է, նրա պատերի տակ նշանավոր դեպքեր են տեղի ունեցել։ Հիշենք մեկը. IX դարում արաբացոց Բուղա ոստիկանը պաշարում է այստեղ ամրացած անհնազանդ հայոց Ապումուսէ կամ Եսայի Ապումուսէ իշխանին։ Պաշարումը և պատերազմը տևում են ամիսներ, արաբացոց զորքը մեծամեծ կորուստներ է կրում, բայց չի կարողանում կոտրել պաշարված զորքի և ժողովրդի դիմադրությունը և հարկադրված է լինում, ի վերջո, հաշտության առաջարկել[1]։*

*Լեռնագագաթում եղած հուշարձաններից արձանագրություններ ունեն հետևյալ երկուսը.*

*Ա. Գտչա վանք. գտնվում է բերդից հյուսիս, մի հարթ բացատում։ Գրականության մեջ բացի վերոհիշյալ անուններից, կոչվել է նաև Թիլեա վանք. բաղկացած է մի գմբեթավոր եկեղեցուց և գավթից. երկու շենքերն էլ կառուցված են համակ սրբատաշ քարերով և արվեստավոր վարպետի ձեռքով։ Արցախի հայ ճարտարապետական լավագույն հուշարձաններից մեկն է։*

---

[1] *«Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 239—301։*

Համաձայն արձանագրությունների հիմնադրված է 1241 թ. և ավարտված 1248 թ. Ամարասի վանականներ Սարգիս և Վրթանես եղբայրների կողմից։ Գավթի հյուսիսային պատին կից կա անտաշ քարերով և այժմ ծածկն ամբողջովին փլված մի եկեղեցի ևս, որն, ըստ ամենայնի, կառուցվել է ավելի վաղ։ Վանքի հնության ապացույց է Մ. Կաղանկատուացու հիշատակությունը, ուր Պարտավի եկեղեցական ժողովի մասնակիցների թվում հիշատակված է նաև—«Գտայ վանուց տանուտէրը»[1]։ Ժողովը տեղի է ունեցել VIII դարի սկզբներին։

Գտչա վանքը հնում ունեցել է ընդարձակ կալվածներ և եղել է մշակույթի կենտրոն։ Հայտնի են այնտեղ գրված կամ պահվող մի քանի ձեռագրեր[2]։ Դիզակի Մելիք Եգանը հովանավորում էր այս լեռան գագաթի հուշարձանները։ Նա իր հայր Ղուկաս վարդապետին կարգել էր Գտչա վանքի վանահայր։ Նոր ժամանակներում Գտչա վանքում եղել է Առաքել վարդապետ Կոստանյանց անունով մի գրասեր վանահայր, որն ունեցել է երկու հատոր գանազան գրվածքներ։ Դրանց մեջ եղել են նաև պատմական բովանդակությամբ կարևոր նյութեր, որոնցից օգտվել է Րաֆֆին՝ Խամսայի մելիքությունները աշխատությունը գրելիս։

Բ. Բերդամիջի եկեղեցի. գտնվում է բերդի ներսում, նրա արևմտյան մասում. թաղածածկ շենք է՝ շինված անտաշ քարերով։ Հարավային մուտքի ճակատին քանդակված է աստվածամոր պատկերը՝ մանուկ Հիսուսը գրկին և երեք այլ սրբապատկերներ։ Արձանագրությունները խաչքարերի և տապանաքարի վրա են եղել, որոնք մենք չտեսանք։

Այս միջավայրից ժողովածուում ամփոփված արձանագրությունները 18-ն են, որոնցից 6-ը հրատարակվում են առաջին անգամ։

### ԳՏՉԱ ՎԱՆՔ

**648. ԵԿԵՂԵՑՈՒ** *հյուսիսային պատին, ներքուստ, 14 տող.*



ՅԱՆՈՒՆ ԱՅ. ՀԱԻՐ ԵՒ ՈՐԴՈ ԵՒ ՍԲ. ՀՈԳՈՅՆ. ԵՍ ՏՐ. ՍԱՐԳԻՍ ԵՒ ՏՐ. ՎՐԹԱՆԷՍ ԱՄԱՐԱՍԱ ԵՊԻՍԿՈՊՈՍՔ ՀԻՄՆԵՑԱՔ ՁԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՎԻՍ ՈՂ (1241) ՇԱՏ ԱՇԽԱՏՈՒԹԲ. ԻՆՁ ՉԱԻԱԳ ԽՈՐԱՆՆ ԽՓԵՑԱԻ ԵՂԲԱՅՐ ԻՄ ՏՐ.

[1] «Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1913, էջ 343։

[2] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հատ. Ա. 285, Բ. 228, Գ. 460։

ՍԱՐԳԻՍ Ի ·ՔՍ. ՓՈԽԵՑԱՒ. ԵՍ ՏՐ. ՎՐԹԱՆԷՍ ԿԱՏԱՐԵՑԻ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԲ. Ի ՄԵՐ ՀԱԼԱԼ ԱՐԴԻՒՆԻՑ [Ի:Ո]Ղ.Ե: ԹՎԻՍ (1246). Ի ԴԱՌՆ ԵՒ ՆԵՂ ԺԱՄԱՆԱԿԻ ՑԱՋԳԷՆ ՆԵՏՈՂԱՑ, ՈՐ ԶԲԱԶՈՒՄ ԳԱՒԱՌՍ ԱՒԵՐԵԱՑ ԵՒ ՄՆԱՑ ԱՑԼԱՍԵՌՒՑՆ ԱԹՈՌՍ ԵՒ ՎԻՃԱԿՍ Ս[Ր]Բ[ՈՑ]Ն ԳՐԻԳՈՐԻՍԻ, ՈՐ Է ՀԱՍՏԱՏԵԱԼ ՍԲ. ՆՇԱՆԱՒՍ ԵՒ ՍԲ. ԱՋՈՎՆ ԵՒ ԳԱՎԱԶԱՆՈՎ ՍՐԲՈՎ. ՎԻՃԱԿԵՑԱՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՎ Ի ՑԱՂՈՒՆՈՑ ԳԵՏՈ ԻՆՉՈՒ ԵՐԱՍԽ, ԻՆՉՈՒ Ի ԱՒԱԶՆ ԳԱՀՏԱՀՎԱՏԻ, ՎԱԿՈՒՆԻՍ ՎԱՂԱԶՆԱԳԵՏՈ Ի ·ՔԱՐԱՏՆԻՍՆ ԽՈՋ[Ա]ԳԵՏՈ[Վ]. ՋԱՌԻՍՏ ԻՒՐ ԿԵՐՈՎ, ՀԱԿԱՐԻ ՀՋԱ[Ր]ԱԳԵՏՈՎ ·ՔՐԴԱԳԵՏ ԻՒՐ [ԳԵՏՈՎ]Ն, ԴԻԶԱԿՈ ԲԼԼՈՒԿԱՆ ԻՒՐ ԿԵՐ[Ո]ՎՆ Հ[Ա]ՅՐԵՆԻՔ ԵԿԵՂԵՑՈՑՍ. ՓԱՐԱԽՆ ԳՈՍՏԱՆՈՑՆ ԿԵՐՈՎՆ, ԵԿԵՂԵՑԱՋՈՐ ԻՒՐ ՍԱՀՄԱՆՈՎՆ. :Ա: ԼԾՈՀՈՂ Ի ՏԱՀԻՍ, :Ա: ԼԾՈ Ի ՏՈՂ, :Ա: Ի ԳԱՔՍ, :Ա: Ի ՄՈԽ[Ր]ԵՆԻՍՆ, ԽԱՉԻՆԱՄԱՐԳ ԽՈՏՈՏԵՂ: ՈՐ ՑԱՑՍ ՎԻՃԱԿԷՍ ԵՒ ՍԱՀՄԱՆԷՍ Ի ՑԻՏ ՈՒՆԻ ԿԱՄ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՄ ՑԻՇ[Խ]ԱՆ ԿԱՄ ՀԱՑՐԱՊԵՏ :Գ: ՍԲ. ԺՈՂՈՎՈՑՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ. ՑԱՑ ԵՒ ՑԱ[Մ]ԵՆԱՑՆ ՍՐԲՈՑ ԱՆԻԾԵԱԼ ԵՂԻՑԻ, ՍԱՍՆ ԵՒ ԲԱԺԻՆ ԸՆԴ ԽԱՉԵՑՈՂՍՆ ԵՂԻՑԻ ԵՒ ԸՆԴ ԿԱԵՆ[Ի]:

*Ծանոթ. 7, 8, 9 տողերի սկզբի մասերը պարունակող քարը ընկած-կորած է. լրացնում ենք ըստ նախորդ հրատարակիչների, նկատի առնելով նաև Եսայի կաթողիկոսի ձեռագրից արտագրված բնագիրը։ 9, 10 տողերի վերջին մասերը գրված են ընդհանուրի սահմանից դուրս (գծագրության մեջ բաժանված ուղիղ գծով)։*

*Բացի այլ տարընթերցումներից, բոլորի մոտ էլ բացակայում է կառուցողների՝ Ամարասի եպիսկոպոսներ լինելը նշող մասը։*

*Հրատ. Ջալալեանց, I, 209—210։ Բարխուդարեանց, 80—81։ Շահխաթունեանց, II, 366։*

***649. ԵԿԵՂԵՑՈՒ** հարավարևելյան ավանդատան մուտքից վեր, 8 տող.*



Ի ԹՎԻՍ :ՈՂԵ: (1246). ԵՍ ՏՐ. ՎՐԹԱՆԷՍ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ՑՐՈՒԵԱԼ ՎԻՃԱԿ ՀԱՍՏԱՏԻ Ե[Ի] ԶՀԱՑՐԵՆԻՔՍ ԵՒ ԱՐԶԱՆԻ ԳՐԵՑԻ. ՀԱՆԱՊԱԶ ՈՒՐԲԱԹՆ ԱՆՑԻՇԱՏԱԿԱՑ ԺԱՄՆ ԵՒ ՏԱՐՈՋՆ :Ժ: (10) ԺԱՄ ԻՆՉ ԵՒ :Ժ: (10) [ԺԱ]Մ ՍԱՐԳՍԻ: ՑԻՆԱՆՑՆ :Ա: ԺԱՄ ՈՒԽՏԱՆԻՍ ԵՂ[Բ]ԱՒՐԻՄ :Ա: ԺԱՄ ՄՈՎՍԻՍԻ, ԻՄ ·ՔՎԵՐՈՐԴՈ[Յ]: ՈՎ ՈՐ ԽԱՓԱՆԷ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ Տ[Է]Ր Է ԱՌ ԱԾ:

*Հրատ. Ջալալեանց, II, 258։ Բարխուդարեանց, 81։*

***650. ԵԿԵՂԵՑՈՒ** հյուսիսարևելյան ավանդատան մուտքից վեր եղել է.*

Ես Ջերզամ և արդի իմ Ղարամ միաբանեցամ սուրբ ուխտիս. տէր Վրդանէս իւր կամաւ զժամատունն ինձ ետես և ես իմ հալալ արդիւնն ընձա բերի սուրբ աթոռոյս. ժամն տարունն առնեն :Ա: աւր ինձ Ջերզամա, ապա Ղարամա. որչափ որ այս եկեղեցիս հաստատ է մի ոք խափանեսցէ յազգէ ազգ:

Ծանոթ. *Այս արձանագրությունը տեղում չգտանք.* Բարխուդարյանցն *ունի մինչև սբ.*

արտոոյս բառերը. Ջալալյանցը՝ լրիվ, բայց հատկապես անունների խիստ աղավաղումներով, կազմել ենք երկուսի համադրությամբ։

Հրատ. Ջալալեանց, II, 258։ Բարխուդարեանց. 81։

651. ԳԱՎԹԻ արևելյան կամարի ոտքին, որը հենվում է եկեղեցու արևմտյան պատին, եկեղեցու մուտքի դիմաց՝ երեսով հարավ. անարվեստ և խառն գրչությամբ 9 տող.



ԵՍ ԻՇԽԱՆ ԲՐՈՒՏ| ԵՒ ՈՐԴԻՔ ԻՄ ՀԱՍԱՆ| ԵՒ ՍՄ-ՊԱՏ ՄԻԱԲԱՆ|ԵՑԱՔ Ս̅Բ. ՈՒԽՏԻՍ ԵՒ| Տ̅Ր. ՎՐԹԱՆԷՍ ԵՐԷՏ|Ի ՏԱՐՈՋ :Բ: ԺԱՄ. ՈՐ[Զ|ԱՓ] ԽԱՓԱՆԷ| ՄԵՐ ՄԵՂԱՑՍ| ՏԷՐ Է:

Ծանոթ. Ժամանակակից է նախորդներին, 1246-ին մոտ։

652. ԽԱՉՔԱՐ, որմնափակ, մեծ և գեղաքանդակ. կանգնեցված է գավթի հյուսիսարևելյան կամարի մեջ, եկեղեցու պատին կից. ստորին մասում 3 տող.



Ի ԹՎԻ⌜Ն⌝ |:ՈՂԵ: (1246). ԵՍ ՏՐ. ՎՐԹԱՆ|ԷՍ ⌜ԿԱՆԳՆ⌝ԵՑԻ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹ̅Ն. ՀՈԳ'ՈՅ ԻՄՈՅ⌝:

Ծանոթ. Հազվագյուտ դեպք է, երբ շենքի ներսում որմնափակ խաչքար է կանգնեցվում։

Հրատ. Ջալալեանց, II, 258։ Բարխուդարեանց, 82։

653. ՈՐՄՆԱԽԱՉ, փոքր, ագուցված է նախորդ խաչքարի որմի հարավային երեսին. խաչի շուրջը 6 տող.



ԵՍ ՄԽԻԹԱՐ ԿԱՆԳՆԵ|ՑԻ ԽԱ|ՉՍ ԱՄՈՒՍ-Ն|ՈՒ ԻՄ| ԹԱՄԱՐԱՑ, ԲԱՆՈ|ԻԱՆԱՑ, ԳՐ⌞Ի⌟-ԳՈՐԱ:

Ծանոթ. Գրչության և քանդակների ոճով, XIII դար։

654. ԽԱՉՔԱՐ, ագուցված է գավթի հարավային պատի մեջ, ներքուստ, վրան եղծված 2 տող՝



ԵՍ . . . . ԵՊ⌞Ի⌟Ս⌞ԿՈՊՈՍ, ԿԱ⌞Ն⌟ԳՆԵՑ|Ի ԽԱ-ՉՍ . . . . .

Ծանոթ. Գրչության ոճով, XVI—XVII դդ.։

***655. ԽԱՉՔԱՐ**, կանգնած է եղել գավթի հարավարևելյան կամարի մեջ, եկեղեցու պատին կից, վրան՝*

Յիշատակ է սուրբ տաճարիս կաթողիկէն դողեցի Սարգսի որդի Սայուն և իւր կողակից Հերիքնազին. թվին ։ՌՃԿԶ։ (1717)։

Ծանոթ. *Խաչքարն այժմ տեղում չկա։*

*Հրատ. Ջալալեանց, II, 258։ Բարխուդարեանց, 82 (որից և առնում ենք)։*

***656. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, գտնվում է գավթի հարավային պատի տակ, ներքուստ, գրերը խիստ ջարդոտված են այժմ.*

Այս է տապան տէր Սիմէօնի որդի Մեսրոպ վարդապետին. թվին ։ՌՃՀԲ։ (1723)։ Լուսահոգի Մելիք Եկանն ձեռնադրել տուավ եպիսկոպոս, կարգեց Կեչ‘այ վանիցն առաջնորդ. որ եկի հաստատեցի սուրբ աթոռս. ի թվին հայոց ։ՌՃՂԶ։-ին (1747) առ Աստուած փոխեցաւ. ով որ կարդայ մէկ բերան ողորմի ասեն։

*Հրատ. Ջալալեանց, II, 258 (որից և առնում ենք)։ Բարխուդարեանց, 82։*

***657. ԽԱՉՔԱՐ**, փոքր, ագուցված է գավթին կից հյուսիսից թաղակապ եկեղեցու արևմտյան մուտքից վեր, արտաքուստ, 6 տող.*

ԽԱՉ | Ս | ՏՐՍ
ԱՐ | Կ | Ի
Ս | այ | ՓՐԿ
Ո | Ի | ԹԵ
Հ | Ո | ԳՈԻ
ՄՈյ

ԽԱՉՍ ՏՐ. Ս[ԱՐԳԻ]ՍԱՑ. ՓՐԿ[ՈՒԹԵ.] ՀՈԳՈ Ի[ՄՈՅ]։

***658. ԽԱՉՔԱՐ**, փոքր, ագուցված է նախորդի մոտ. վրան միայն թվականը.*

ԹՎ | ՌԾԵ

Թ[ՎԻ]Ն ։ՌԾԵ։ (1606)։

***659. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, երեսին զգեստավորված քահանա, սկիհը ձեռքին, առաջին վեմ քար, դիմացը՝ խունկ ծխող սարկավագ, դրանց կողքերին՝ աղավնիներ և խաչեր։ Վերևի շրթունքին և ճակատին եղծված արձանագրություն. հետագայում մեջը փորվել և գուռ է դարձվել։ Գտնվում է վանքի մոտ՝ աղբյուրի դիմաց, որի մեջ թափվում է ջուրը.*

……ՍՀՍԱ ...ԱՅ ԱՍՆՆԵՅԻՁԽ ... ՍՓՐԿՈ ԹԵ ՅՒՍ
Թ ԻՍ ՌԾ Ը
ԻՈ
ան
ՌՆ
ՍՐՆ
Ա
ԱԳ
հայ
Ի
ՈՀ
Ա

. . . . ԻԿԱՄԱՒՆ ԱՑ. ԿԱՆԿՆԵՑԻ ՋԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵ . . . . . . . . ԱՆՈՒՆ ՍԱՐԿԱՒԱԳ. ՀԱՑՐ ԻՄ ՈՀ-Ս.-ՐՆ . . . ԹՒԻՍ :ՌԾԸ: (1609):

### ԳՏԻՉ ԿԱՄ ՏՈՂ ԲԵՐԴ

**660.** *ՏՈՂ ԲԵՐԴԻ կիսավեր եկեղեցու արևելյան կողմում մի գերեզմանաքարի վրա եղել է.*

Թվին :ՉՂ: (1257). այս է տապան Մուխէս վարդապետին . . .

Մանոթ. *Տեղում չգտանք։*

*Հրատ. Բարխուդարեանց, 84։*

Տող բերդի *կիսավեր եկեղեցու մեջ եղել են սպիտակավուն քարից հինգ փոքր խաչքարեր՝ հիշատակագրություններով.*

**661.** Խաչս Նազարին.
**662.** Խաչս Մրհապետին.
**663.** Խաչս Շախումին.
**664.** Խաչս Ղազարայ.
**665.** Խաչս Եզուայ (Եղուայ?)

Մանոթ. *Տեղում չգտանք։*

*Հրատ. Բարխուդարեանց 84։*

## 65. ՑՈՐ ԳՑՈՒՂ

*Հիմնված է այն բարձր լեռան ստորոտում, որի գագաթին գտնվում է Ցորաբերդը։ Այս բերդը վերջին դարերում կոչվել է նաև Վելիջանի բերդ, համանուն իշխանի անունով։ Ցորաբերդը Արցախի միջնադարյան հին բերդերից է։ Անձրևների հեղեղումներից հետո բերդի շրջապատում երևում են հին ջրատար խողովակների, մեծ կարասների և խեցեղեն անոթների բեկորներ և տնային իրերի կտորներ։*

*Բերդաքարի լանջին, գյուղից հարավ մնում են մի փոքր եկեղեցու ավերակները, որի մոտ նաև մի ստորերկրյա դամբարան՝ մեջը անարձանագիր գերեզմանաքար. եկեղեցին կոչվում է ս. Լուսավորչի անապատ։*

*Գյուղամիջի եկեղեցին շեն է և կոչվում է Ամենափրկիչ. վերջինս չորս սյուների վրա կանգնած թաղածածկ շենք է։*

**666.** *ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան մուտքի բարավորի վրա, անարվեստ ղրչությամբ 1 տող.*



Ծանոթ. *Բարխուդարյանցը այս անորոշ գրվածքը վերծանում է «Հիշատակ է ՆՆ (951) թվ.»։ Նկատի ունենալով գրչության ոճը և եկեղեցու նորաձև լինելը, մենք ընդունելի չենք համարում նման վերծանում։*

*Հրատ. Բարխուդարեանց, Շ5։*